

Հավելված
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2022թ. ապրիլի 22-ի թիվ 109-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ	7
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	11
III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	12
IV. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԴՈՒՄՆԵՐ	13
1. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4236/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	13
2. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4212/ ԵՎ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4213/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱԽՍԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	25
3. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4213/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	28
4. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4212/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ/	32
5. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4212/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԲՆԱԿԱՆ ԳԱԶ/	36
6. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» /4251/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	39

7. 1120-11001՝ քրեականսարողական ծառայություններ ծրագրի շրջանակներում «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» /4264/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	46
V. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	50
8. 1120-11001՝ քրեականսարողական ծառայություններ ծրագրի շրջանակներում «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4236/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	50
9. 1120-11001՝ քրեականսարողական ծառայություններ ծրագրի շրջանակներում «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» /4251/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	51
VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ	52
10. 1120-31002՝ քրեականսարողական ծառայության կարողությունների շարգացման եւ հաճախությունների աղակտեսման ծրագրի շրջանակներում «ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ» /5122/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿՆՔՎԱԾ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	52
11. քրեականսարողական հիմնարկներում ղազկող կազմակերպությունների եւ քրեականսարողական հիմնարկի ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	58
VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	60

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 28-Ա որոշում,

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն:

Հաշվեքննության առարկան

2021 թվականի տարեկան պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը:

Հաշվեքննության չափանիշները

1. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
2. ՀՀ կառավարության 15.10.2015թ-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 1182-Ն որոշում,
3. ՀՀ կառավարության 16.06.2005թ-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները հաստատելու մասին» թիվ 896-Ա որոշում,

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը**

2022 թվականի փետրվարի 14-ից մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը:

**Ջննման և
դիտարկման
ընթացակարգերի
իրականացման
ժամկետը**

2022 թվականի փետրվարի 21-ից մինչև մարտի 25-ը ներառյալ:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ, զննում և դիտարկում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ՔԿԾ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկներ
ԴՀ	Դատապարտյալների հիվանդանոց
ՀՀՄՍ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննություն:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության 1120՝ «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրով 2021 թվականի բյուջեի տարեկան պլանը կազմել է 11,081,831.60 հազ.դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 11,572,751.60 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 11,049,434.49 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 10,739,546.44 հազ.դրամ:

ՔԿԾ-ի 2021 թվականի պետական բյուջեի պլանային և ճշտված ցուցանիշների տարբերությունը ներկայացված է ստորև աղյուսակում:

2021 թվականի պլանային ցուցանիշների վերաբերյալ

Աղյուսակ 1, Հազ.դրամ

Հոդված	2021 թվական				Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	Պլան	Ճշտված պլան	Տարբերություններ /+,-/			
			ՀՀ կառավարության որոշումներով	Վերադասի կողմից		
4212	655,256.10	717,271.25		62,015.15	716,088.25	699,527.00
4213	49,117.10	90,117.10		41,000.00	83,442.69	77,570.37
4236	1,357,800.00	1,271,000.00	-86,000.00		1,270,997.06	1,138,019.31
4251	81,000.00	69,000.00		-12,000.00	68,732.85	69,829.87
4264	92,301.00	78,179.32	-4,034.60	-10,087.08	78,179.21	67,462.90

2021 թվականի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճի և նվազման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում

Աղյուսակ 2, Հազ.դրամ

Հոդված	Դեբիտորական պարտք		Տարբերություն /+, -/	Կրեդիտորական պարտք		Տարբերություն /+, -/
	Տարեսկիզբ	Տարեվերջ		Տարեսկիզբ	Տարեվերջ	
4212	78,056.04	80,242.57	+ 2,186.53	71,890.97	57,516.22	-14,374.75
4213	1,270.85	1,325.21	+54.36	12,268.60	6,450.64	- 5,817.96
4236	71,513.75	204,491.50	+32,977.75			
4251	1,802.81	1,802.81	-			
4251	10,511.97	9,414.95	- 1,097.02			
4264	16,586.60	27,304.91	-10,718.31			

1120-11001՝ «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացված հաշվեքննությամբ արձանագրվել են.

/4236/ «Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ» հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ կապված՝ սննդի պատրաստման համար նախատեսված կոմունալ ծախսերի /բնական գազ, ջուր, էլեկտրաէներգիա/, ինչպես նաև այդ գործընթացին մասնակցող թվով 7 ՔԿՀ-ներում սահմանված հաստիքներով/ ճաշարանի բանվորներ, խոհանոցի բանվորներ և խոհարարների օգնականներ/ աշխատող դատապարտյալներին վճարվող աշխատավարձերի հետ: Նշված ծախսերը կատարվել են քրեակատարողական հիմնարկների հաշվին՝ մատակարարի փոխարեն, որը նախատեսված չի եղել Պայմանագրով: Այսպիսով, առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պայմանագրի սահմանված պահանջների և պայմանագրին կից տեխնիկական բնութագրի հետ, որոնք արտացոլված են ընթացիկ եզրակացության 1-ին կետում: Սույն հոդվածով արձանագրվել է նաև խեղաթյուրում՝ **5,565.54 հազ. դրամ գումարի չափով**, կապված վերոնշյալ հաստիքների գծով աշխատակիցներին վճարված գումարի հետ: Նշված խեղաթյուրումն արտացոլված է ընթացիկ եզրակացության 8-րդ կետում:

/4212/ «Էներգետիկ ծառայություններ» և /4213/ «Կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածներով ծախսերի պլանավորման հետ կապված հայտնաբերվել են անհամապատասխանություններ սահմանված նորմաների պահանջների հետ: 2021թ.-ին էներգետիկ և կոմունալ ծառայությունների մասով սահմանված նորմաներից ավելին է պլանավորվել՝

- Էլեկտրաէներգիայի գծով -219,680.80 հազ. դրամ
- Գազամատակարարման գծով – 100,049.42 հազ. դրամ
- Ջրամատակարարման և ջրահեռացման գծով – 23,320.87 հազ. դրամ

Նշված անհամապատասխանությունը ներկայացված է ընթացիկ եզրակացության 2-րդ կետում:

/4213/ «Կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերի և սահմանված նորմաների պահանջների միջև: 2021 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 313,001.94 խ/մ, գումարով՝ 54,868.2 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 72,014.84 խ/մ, գումարով՝ 12,759.44 հազ. դրամ: Նշված անհամապատասխանությունը ներկայացված է ընթացիկ եզրակացության 3-րդ կետում:

/4212/ «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ էլեկտրաէներգիայի, ինչպես նաև բնական գազի մատակարարման ծախսերի և սահմանված նորմաների պահանջների միջև: 2021 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 661,503.33 կվ/ժ, գումարով՝ 26,460.07 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 11,147.00 կվ/ժ, գումարով՝ 445.88 հազ. դրամ, իսկ բնական գազի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 500,827.00 խ/մ, գումարով՝ 68,278.11 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 150,462.00 խ/մ, գումարով՝ 20,914.21 հազ. դրամ:

Նշված անհամապատասխանությունները ներկայացված են ընթացիկ եզրակացության 4-րդ և 5-րդ կետերում:

/4251/ «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են հսկողական գործընթացի թերացումներ, ինչպես նաև կատարված ընթացիկ նորոգման ծախսերի ճանաչման մասով անհամապատասխանություններ օրենքով սահմանված պահանջների հետ,

որոնք հանգեցրել են **խեղաթյուրման՝ 20,900.72 հազ.դրամ** գումարի չափով: Մասնավորապես, «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածի փոխարեն հետևյալ ծախսերը իրականացվել են «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

- Կոշ» ՔԿՀ-ի 630 ԿՎԱ տրանսֆորմատորի, էլեկտրական սարքավորումների և մոնտաժման աշխատանքների կատարումը, գումարով՝ **4,384.08 հազ.դրամ,**

- «Արմավիր» ՔԿՀ-ի վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցումը, գումարով՝ **16,516.64 հազ.դրամ:**

Նշված անհամապատասխանությունները ներկայացված են ընթացիկ եզրակացության 6-րդ կետում և խեղաթյուրումները՝ 9-րդ կետում:

/5122/ «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ և խեղաթյուրում կապված Արմավիր ՔԿՀ-ի համար տեսադիտման և տեսահսկման արդի համակարգի ձեռքբերման համար կազմակերպված գնման գործընթացի հետ: Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ գնման մասնակցի /«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ/ կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման հայտով սահմանված գինը Քրեակատարողական ծառայությունը «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի փետրվարի 1-ին կնքել է թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագիրը **52.879.94 հազ.դրամ** ավելի գնով: Արձանագրվել է խեղաթյուրում նույն գումարի չափով: Քննարկումների արդյունքում կնքվել է լրացուցիչ համաձայնագիր և պայմանագրային գումարը պակասեցվել է **52.879.94 հազ.դրամով, ինչի արդյունքում խեղաթյուրումը վերացվել է:** Նշված փաստը ներկայացված է ընթացիկ եզրակացության 10-րդ կետում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

Գեղամ Հովեյան

22 ապրիլ 2022 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան 19 փող., ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում տարեկան բյուջեի կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1-ից 7-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՔԿԾ-ի 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ՝ 26,466.26 հազ. դրամ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 8-րդ և 9-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն էական է ՔԿԾ-ի 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2021 թվականի տարեկան

հազ.դրամ

Ծրագիր		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		11,081,831.60	11,729,135.60	11,195,888.49	10,886,000.44
1120	Քրեակատարողական ծառայություններ	11,081,831.60	11,572,751.60	11,049,434.49	10,739,546.44
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	156,384.00	146,454.00	146,454.00

IV. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4236/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ
ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կրկնվող կետ

Առկա են անհամապատասխանություններ.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ,
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ,
- ՔԿՀ սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ» հոդվածով տարեկան պլանով ՔԿԾ-ին նախատեսվել է հատկացնել 1,357,800.00 հազ. դրամ: ՀՀ կառավարության 04.11.2021 թվականի N 1821-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն տարեկան նախահաշվում՝ հաշվետու ժամանակաշրջանի (տարի) ճշգրիտ պլանը նվազեցվել է 86,800.00 հազ. դրամով և կազմել է՝ 1,271,000.00 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 1,270,997.06 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 1,138,019.31 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունը կազմել է՝ 132,977.75 հազ. դրամ, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ կառավարության 04.05.2017 թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ամբողջությամբ նախատեսվել է հաջորդ տարվա /2022թ./ սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պայմանագրի համար որպես կանխավճար:

Հաշվեքննիչ պալատի կողմից ՔԿԾ-ում իրականացված 2021 թվականի երեք, վեց, ինը և տարեկան հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել են.

1. ՔԿԾ-ի և բաց մրցույթում հաղթող ճանաչված «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի (այսուհետ Կատարող) միջև 17.11.2020 թվականին կնքվել է ՀՀ արդարադատության

նախարարության թվով տասներկու քրեակատարողական հիմնարկների (այսուհետ՝ ՔԿՀ) կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագիրը: Պայմանագրի 4.1 կետի համաձայն, մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի համաձայն, սննդի պատրաստումն ու հատկացումը կատարվում է ՔԿՀ-ի տարածքում, Կատարողի կողմից բերված անհրաժեշտ սարքավորումների միջոցով (քրեակատարողական հիմնարկի կողմից կարող են տրամադրվել որոշակի սարքավորումներ, սակայն դրանց սպասարկման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն Կատարողի կողմից): Մեկ անձի համար պատրաստի սննդի վրա ծախսված օրվա գումարը որոշելու համար պետք է մասնակցի գնային առաջարկի ընդհանուր գումարը (1,357,800.00 հազ. դրամ) բաժանել ներկայացված գրաֆիկով նշվածի օրերի (365 օր) և դատապարտյալների թվաքանակի (2400 մարդ) վրա ($1357800000:365:2400=1550$), ստացված գումարով՝ 1550 դրամով կատարողն իրականացնելու է մեկ անձի օրվա սննդի տրամադրումը: Տեխնիկական բնութագրում, սննդի պատրաստման մասով հստակ նկարագրված չէ, որ կոմունալ ծախսերը պետք է իրականացվի ՔԿԾ-ի հաշվին:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

Հաշվի առնելով այն որ, սննդի պատրաստումը իրականացվում է ՔԿՀ-ների խոհանոցում, կամ իրենց կողմից տրամադրված այլ տարածքում, որտեղ բացակայում են կոմունալ ծախսերի հաշվարկման համար նախատեսված առանձնացված հաշվիչներ, ապա ստացվում է, որ սննդի պատրաստումը «Ռեդի-Ստեդի» ՍՊԸ-ի կողմից կատարվում է ՔԿՀ-ների էլ.էներգիայի, գազի, ջրի և ջեռուցման հաշվին, որի վերաբերյալ կողմերի միջև չկա որևէ հաշվարկ և գրավոր պայմանավորվածություն:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի,

տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը», ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով, այն է՝ «...մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

Վերը նշվածի մասին է վկայում այն, որ 2021 թվականին ՔԿՀ-ներում պահվող մեկ դատապարտյալի հաշվով կատարված փաստացի կոմունալ ծախսերը շատ դեպքերում գերազանցում են ՀՀ կառավարության 16.06.2005 թվականի N 896-Ա որոշմամբ սահմանված կոմունալ ծախսերի նորմաները:

Անհրաժեշտ է նշել, որ ՔԿԾ-ի կողմից ընդունվել են վերը նշված արձանագրումները և ավելին՝ 2022թ.-ի կարիքների համար անհրաժեշտ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթում, գնման առարկա հանդիսացող սննդի պատրաստման ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարվել է հետևյալ ավելացումը՝ «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքում իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ բոլոր ծառայությունների (հոսանք, գազ, ջուր) դիմաց վճարումները կատարվելու է Պատվիրատուի կողմից (հաշվին), իսկ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքից դուրս իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ բոլոր ծառայությունների (հոսանք, գազ, ջուր) դիմաց վճարումները կատարվելու է Կատարողի կողմից (հաշվին)»:

2. Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի համաձայն, քրեակատարողական համակարգի բարեփոխումների և զարգացման ներկա պահանջներից ելնելով, ինչպես նաև համակարգի բնականոն աշխատանքը կազմակերպելու նպատակով՝ ՔԿՀ կարիքների համար անհրաժեշտ է, թվով տասներկու ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար ձեռքբերել պատրաստի սննդի մատուցման ծառայություններ, ներառյալ՝ հացը, որը իրենից ներկայացնում է սննդամթերքի ձեռքբերման, սննդի պատրաստման և **հատկացման արդյունավետ համակարգ**: Պայմանագրով սահմանված սննդի պատրաստման և հատկացման արդյունավետ համակարգը ենթադրում է, որ այդ գործառույթները պետք է կատարվեն ամբողջովին «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի աշխատակիցների միջոցով և վարձատրվեն «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից: **Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին**

մասով սահմանված պահանջների հետ, այն է՝ «Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը», ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾԶԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով, այն է՝ «...մատուցման ենթակա ծառայության գինը կազմել է 1,357,800.00 հազ. դրամ և այն ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Հաշվեքննողների պահանջով ՔԿԾ-ի կողմից տրամադրվել է 2021 թվականին ՔԿՀ-ներում աշխատող և ՔԿԾ-ի բյուջեի միջոցների հաշվին վարձատրվող դատապարտյալների վերաբերյալ տեղեկատվություն, այն է՝

ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների թվաքանակ

Աղյուսակ 1

	ՔԿՀ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	Սևան	6	5	4	5	5	5	4	5	4	4	4	4
2	Կոշ	10	11	11	11	11	12	11	11	9	10	10	9
3	Արթիկ	13	12	12	13	13	13	14	13	14	13	13	13
4	Աբովյան	15	13	13	14	15	13	13	13	13	15	15	15
5	ԴՀ	4	5	5	5	5	6	6	5	5	5	5	5
6	Նուբարաշեն	3	3	3	3	3	3	3	4	3	3	4	4
7	Գորիս	4	4	4	4	3	3	3	2	2	2	2	3
8	Վանաձոր	4	5	4	5	5	5	5	4	4	4	5	6
9	Վարդաշեն	12	7	9	9	7	7	6	6	5	5	6	6
10	Հրազդան	5	5	4	4	4	4	4	4	4	4	4	4
11	Արմավիր	12	11	10	10	10	10	10	9	8	8	9	10
	Ընդամենը	88	81	79	83	81	81	79	76	71	73	77	79

ՔԿՀ-ների 2021 թվականին աշխատող դատապարտյալների աշխատավարձի ըստ հաստիքների և դրույքաչափերի բաշխման տեղեկատվության վերլուծությունից պարզվել է, որ հաստիքացուցակում առկա են **ճաշարանի բանվորի, խոհանոցի բանվորի և խոհարարի օգնականի** հաստիքներ, որոնց հաշվարկված

աշխատավարձի գումարները, ըստ ամիսների տարվա ընթացքում կազմել է՝ **5,565.54** հազ. դրամ:

Հունվար-Հունիս

Աղյուսակ 2, հազ.դրամ

Հ/Հ	ՔԿՀ	Ազգանուն, անուն	Պաշտոն	Հաշվարկված աշխատավարձ						
				Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Ընդամենը
1	Արմավիր	Ն.Ա.	ճաշարանի բանվոր	92.62	92.62	92.62	92.62	92.62	92.62	555.72
		Հ.Գ.	ճաշարանի բանվոր	92.62	92.62	92.62	92.62	92.62	92.62	555.72
2	Գորիս	Գ.Ա.	խոհանոցի բանվոր	89.10	89.10	89.10	176.43	-	-	443.73
3	Դատապարտյալների հիվանդանոց	Ղ.Ա.	խոհանոցի բանվոր	92.62	92.62	92.62	92.62	92.62	92.62	555.72
4	Կոշ	Ա.Զ.	ճաշարանի բանվոր	-	60.64	72.09	-	-	-	132.73
		Խ.Գ.	ճաշարանի բանվոր	93.29	93.29	93.29	93.29	93.29	135.69	602.14
		Տ.Հ.Հ.	ճաշարանի բանվոր	89.10	17.82	-	-	-	-	106.92
		Մ.Ք.	ճաշարանի բանվոր	-	-	-	89.10	89.10	89.10	267.30
5	Սևան	Ե.Վ.	ճաշարանի բանվոր	93.29	93.29	93.29	93.29	93.29	116.91	583.36
		Հ. Յ.	ճաշարանի բանվոր	93.29	93.29	93.29	93.29	93.29	93.29	559.74
		Մ.Ս.	ճաշարանի բանվոր	52.13	-	-	-	-	-	52.13
		Հ.Ս.	ճաշարանի բանվոր	-	-	-	47.65	-	-	47.65
6	Վարդաշեն	Ֆ.Ա.	խոհարարի օգնական	92.62	92.62	92.62	92.62	92.62	92.62	555.72
		Հ.Ա.	ճաշարանի բանվոր	78.50	-	-	-	-	-	78.50
	Ընդամենը			959.18	817.91	811.54	963.53	739.45	805.47	5,097.08

Ապրիլ-Սեպտեմբեր

Աղյուսակ 3, հազ.դրամ

Հ/Հ	ՔԿՀ	Ազգանուն անուն	Պաշտոն	Հաշվարկված աշխատավարձ /հազ. դրամ/						
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Ընդամենը
1	Աբովյան	Ա.Կ.	Խոհանոցի սպասարկող	47.65	70.47	70.47	93.29	93.29	93.29	468.46

ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների հաստիքների վերաբերյալ անհամապատասխանությունները 2021 թվականի ընթացքում ՔԿԾ-ն շտկել է: Սակայն հաշվարկված աշխատավարձի գումարների վերաբերյալ արձանագրված 5,565.54 հազ. դրամի չափով խեղաթյուրումը չի վերացվել:

Արդյունքում՝ ՔԿԾ-ն տասներկու ՔԿՀ կարիքների համար անհրաժեշտ սննդի պատրաստման և մատուցման ծառայությունների համար, կնքելով պայմանագիր «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ, յոթ ՔԿՀ-ների աշխատող դատապարտյալների հաստիքացուցակներում սահմանել և հաստատել է 15 հաստիք, որոնց վարձատրությունը, ըստ պայմանագրի պետք է կատարեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ն: 2021 թվականի ընթացքում վերոնշյալ դատապարտյալների համար ՔԿԾ-ի բյուջեից հաշվարկվել է՝ **5,565.54 հազ. դրամ** աշխատավարձ: **Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:**

«Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում տրված կանխավճարի վերաբերյալ

Համաձայն ՔԿԾ-ի 2021 թվականի «Դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվության՝ «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի նկատմամբ դեբիտորական պարտքը կազմում է 71,513.75 հազ. դրամ: 2021 թվականի ընթացքում կատարվել է վճարում 1,270, 997.06 հազ.դրամ: Այսպիսով, «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ին 2021 թվականին վճարված գումարը դեբիտորական պարտքի հետ միասին կազմում է 1,342,510.81 հազ.դրամ /1,270,997.06+71,513.75/: 2021 թվականի ընթացքում «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից մատուցվել է 1,138,019.38 հազ. դրամի ծառայություն, որից 2021 թվականի համար կնքված պայմանագրի շրջանակներում՝ 1,118.396.31 հազ.դրամ և 2022 թվականի համար կնքված պայմանագրի շրջանակներում՝ 19,623.00 հազ.դրամ: Այսպիսով, 01.01.2022 թ. դրությամբ «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի դեբիտորական պարտքը կազմում է 204,491.60 հազ.դրամ /1,342,510.81 -1,138,019.38/, կամ 26.12.2021 թվականի դրությամբ «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ին 2022 թվականի համար կնքված պայմանագրի շրջանակներում վճարվել է 224,114.60 հազ.դրամ /204,491.60+19,623.00/: Պարտքը կամ ՔԿԾ-ի կողմից վերջինիս տրված կանխավճարի մնացորդը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 71,513.75 հազ.դրամ: 2021 թվականի ընթացքում ՔԿԾ-ին մատուցված 1,138,019.31

հազ. դրամ ծառայությունների դիմաց «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ին վճարվել է 1,270,997.06 հազ.դրամ: Պետք է նշել, որ «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված լրացուցիչ համաձայնագրով վճարվել է 224,114.50 հազ.դրամ կանխավճար, որից 19,623 հազ.դրամ գումարը կազմել է 2021 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի՝ 7 օրերի համար մատուցված ծառայությունները: Միաժամանակ, ՔԿԾ-ի և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված /2022 թվականի համար/պայմանագրով սննդի պատրաստման ծառայությունների գինը սահմանվել է 1,357,800.00 հազ դրամ, /2400 դատապարտյալ* 1550*365օր/:

Հաշվեքնության օբյեկտի արձագանքը

1. Սննդի պատրաստման ծառայությունների գնման պայմանագրի տեխնիկական բնութագրով կամ որևէ այլ փաստաթղթով Կատարողին վերապահված չի եղել կոմունալ ծախսերն ինքնուրույն կատարելու պարտավորություն (օրինակ՝ առանձին բաժանորդ դառնալու և այդ ծախսերն ինքնուրույն կատարելու պահանջ), ինչը, բնականաբար, կարող էր հանգեցնել ծառայությունների արժեքի համամասնորեն թանկացման: Նման պարտավորության բացակայությունը, իր հերթին, ինքնաբերաբար վկայում է, որ ՔԿԾ-ի տարածքում իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ ծառայությունների վճարումները (ջուր, գազ, էլ.էներգիա) կատարվելու են հենց ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 2022թ.-ի կարիքների համար անհրաժեշտ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով, սույն թվականի հոկտեմբերի 5-ին (մինչև Հաշվեքնանից պալատի Արձանագրության սրանալը), հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթ և 02.12.2021թ.-ին կնքվել է համապատասխան պայմանագիր, որտեղ գնման առարկա հանդիսացող՝ սննդի պատրաստման ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարվել է հետևյալ ավելացումը՝

«ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքում իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ բոլոր ծառայությունների (հոսանք, գազ, ջուր) դիմաց վճարումները կատարվելու է Պատվիրատուի կողմից (հաշվին), իսկ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի տարածքից դուրս իրականացվող սննդի պատրաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ բոլոր ծառայությունների (հոսանք, գազ, ջուր) դիմաց վճարումները կատարվելու է Կատարողի կողմից (հաշվին)»:

Տեխնիկական բնութագրում կատարված ավելացումն ավելի է հստակեցում սննդի պարարաստման ծառայությունների ընթացքում օգտագործված կոմունալ ծառայությունների վճարումների վերաբերյալ փաստը:

2. Սննդի պարարաստման ծառայությունների տեխնիկական բնութագրում նշված է, որ ՀՀ ԱՆ քրեակարարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար ձեռքբերվող սննդի պարարաստման ծառայությունն իրենից ներկայացնում է սննդամթերքի ձեռքբերման, սննդի պարարաստման և **հատկացման արդյունավետ համակարգ**, քանի որ սննդամթերքը ձեռք բերելուց, **սնունդը պարարաստելուց հետո՝ հաջորդ քայլը պետք է լինի այդ պարաստի սննդի հատկացումը: Սննդի հատկացում չի նշանակում այն հատկացնել անմիջապես կալանավորված անձանց և/կամ դատապարտյալներին, այն կարող է հատկացվել ՀՀ ԱՆ քրեակարարողական հիմնարկի պարասխանատու անձին:**

2.1 2021 թվականին ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների հաստիքացուցակում առկա ճաշարանի բանվորի, խոհանոցի բանվորի և խոհարարի օգնականի հաստիքների առկայությունը տեխնիկական սխալի հետևանք է, մասնավորապես՝ հաստիքի անվանումը մնացել է նախկինում նշված անվանմամբ, սակայն աշխատանքային գործառույթն ամբողջությամբ տարբեր է: Միաժամանակ տեղեկացվում է, որ նշված դատապարտյալները փաստացի չէին կարող կատարել սննդի պարարաստման ծառայություններին առնչվող աշխատանքներ, քանի որ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին տրամադրված տարածքները հիմնականում գտնվում են քրեակարարողական հիմնարկների ռեժիմային տարածքից դուրս, իսկ «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն» և «Սևան» ՔԿՀ-ների տարածքներում «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն ընդհանրապես սննդի պարարաստման ծառայություններ չի իրականացնում: Նշված հաստիքներում աշխատող դատապարտյալները իրականացրել են պարաստի սնունդը կալանավորված անձանց և դատապարտյալներին հատկացնելու (հանձնելու), ինչպես նաև վերջիններիս հարազատների կողմից բերված հանձնմունքի տեղափոխման աշխատանքները, որի համար ստացել են համապատասխան վարձատրություն:

ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության կողմից ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների հաստիքացուցակում առկա ճաշարանի բանվորի, խոհանոցի բանվորի և խոհարարի օգնականի հաստիքների անվանումներում առկա տեխնիկական սխալն ամբողջությամբ շտկվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը կարելի է արձանագրել, որ հաշվեքննության արդյունքներով կազմված Արձանագրությամբ փաստագրված անհամապատասխանությունն վերացվել է և Արձանագրությամբ նշված դատապարտյալները փաստացի չեն կատարել սննդի պարարաստման ծառայություններին առնչվող աշխատանքներ, ուստի 5,565.54 հազ. դրամի չափով խեղաթյուրման փաստը նույնպես բացակայում է:

2.2 ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի միջև 02.12.2021թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1» ծածկագրով պայմանագրի 4.1.1 կետի համաձայն, այն է՝ **«Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ը, որի չափը կհստակեցվի լրացուցիչ՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար»**, 2021 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ 1 համաձայնագիր, ըստ որի Պայմանագրով նախատեսվել է կանխավճար՝ 224,114,500 (երկու հարյուր քսանչորս միլիոն հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, որը կազմում է Պայմանագրի գնի 16,5 տոկոսը: Կանխավճարի հատկացումը նախատեսված էր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով, որի իրավական հիմք է հանդիսանում 4 մայիսի 2017 թվականի ՀՀ կառավարության N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության կողմից «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ին 224,114,500 հազ.դրամ կանխավճարը վճարվել է համապատասխան բանկային երաշխիքի հիման վրա, իսկ վճարված կանխավճարն ամբողջությամբ «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից մարվել է 07.03.2022թ.-ին՝ մացուցված ծառայությունների դիմաց:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

1. Ինչ վերաբերում է պարզաբանման առաջին պարբերությանը՝ «Սննդի պատրաստման ծառայությունների գնման պայմանագրի տեխնիկական բնութագրով կամ որևէ այլ փաստաթղթով Կատարողին վերապահված չի եղել կոմունալ ծախսերն ինքնուրույն կատարելու պարտավորություն (օրինակ՝ առանձին բաժանորդ դառնալու և այդ ծախսերն ինքնուրույն կատարելու պահանջ), ինչը բնականաբար կարող էր հանգեցնել ծառայությունների արժեքի համամասնորեն թանկացման», այն ընդունելի չէ հաշվեքննողների կողմից, քանի որ Պայմանագրի 4.1 կետի համաձայն, մատուցման ենթակա ծառայության գինը ներառում է **Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը**: Պարզաբանման երկրորդ մասի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ ՔԿԾ-ի կողմից ընդունվել է նշված անհամապատասխանությունը, սակայն 2022թ.-ի կարիքների համար անհրաժեշտ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթում գնման առարկա հանդիսացող սննդի պատրաստման ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարված փոփոխություն, կատարողին կմոտիվացնի ցանկացած դեպքում սնունդը պատրաստել ՔԿՀ տարածքում, որպեսզի ի հաշիվ պատվիրատուի իր շահույթն առավելագույնի հասցնի՝ նվազագույն դարձնելով ծառայության ինքնարժեքը:

2. Պարզաբանումը ընդունելի չէ հաշվեքննողների կողմից, քանի որ ՔԿՀ-ների աշխատող դատապարտյալների հետ կնքված աշխատանքային պայմանագրերում սահմանվել է ոչ միայն նրանց հաստիքների անվանումը, այլև նրանց անմիջական աշխատանքային պարտականությունները բնութագրող շրջանակները /սննդի բեռնաթափում և բեռնափոխադրում, խոհարարի օգնական/:

2.1 Պարզաբանումը ընդունելի չէ հաշվեքննողների կողմից, քանի որ ՔԿԾ-ի պնդումը այն մասին, որ «հաստիքների առկայությունը տեխնիկական սխալի հետևանք է, մասնավորապես՝ հաստիքի անվանումը մնացել է նախկինում նշված անվանմամբ, սակայն աշխատանքային գործառույթն ամբողջությամբ տարբեր է», չի համապատասխանում իրականությանը, որովհետև ինչպես նախորդ մեկնաբանությունում նշվել է՝ ՔԿՀ-ների աշխատող դատապարտյալների հետ կնքված աշխատանքային պայմանագրերում սահմանվել է ոչ միայն նրանց հաստիքների անվանումը, այլև նրանց անմիջական աշխատանքային պարտականությունները բնութագրող շրջանակները /սննդի բեռնաթափում և բեռնափոխադրում, խոհարարի օգնական/։ Հետևաբար՝ հաստիքների անվանումները չեն կարող լինել տեխնիկական սխալ։ ՔԿՀ-ների աշխատող դատապարտյալների հաստիքացուցակներում առկա՝ ճաշարանի բանվորի, խոհանոցի բանվորի, խոհարարի օգնականի և խոհանոցի սպասարկողի հաստիքները փոխվել են և **ՔԿԾ-ն շարկել է ՔԿՀ-ներում աշխատող դատապարտյալների հաստիքների վերաբերյալ անհամապատասխանությունները, սակայն առկա խեղաթյուրումը 5,565.54 հազ. դրամի չափով չի վերացվել**։

2.2 Հաշվեքննության օբյեկտի կողմից, ըստ էության, ներկայացվել են նույն փաստերը, իսկ կանխավճարի մասով հաշվեքննողների կողմից ներկայացված է միայն վերլուծություն։

Եզրակացություն

1. Սննդի պատրաստումը «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի ընթացքում կատարվել է ՔԿՀ-ների կողմից տրամադրված տարածքներում՝ վերջիններիս կոմունալ ծախսերի /էլ.էներգիա, գազ, ջուր, ջեռուցում/ հաշվին։ ՔԿԾ-ի և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի գինը ներառում է **Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝** այդ թվում նաև սննդի պատրաստման համար նախատեսված կոմունալ ծախսերը։ Հետևաբար, նշված ծախսերը պետք է իրականացվեն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից։ **Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով և 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես**

նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պարարաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով:

2. Թվով յոթ ՔԿՀ-ներում աշխատող 15 դատապարտյալների համար սահմանված հասարիքները ֆինանսավորվել է ՔԿԾ-ի կողմից, այնինչ նշված վարձարության ծախսը՝ ըստ Պայմանագրի պետք է իրականացվեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող սննդի մատուցման շրջանակներում: **Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պարարաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով: Նշված անհամապատասխանության հերևանքով առկա է խեղաթյուրում 5,565.54 հազ. դրամի չափով:**

Առաջարկություն

Սննդի պարարաստման և մատուցման ծառայությունները ՔԿՀ-ների կողմից տրամադրված տարածքում իրականացնելու համար, Կատարողի կողմից ստացվող շահույթը առավելագույնի հասցնելու ռիսկը բացառելու նպատակով, առաջարկում ենք սահմանել կոմունալ ծախսերի /էլ. հոսանք, գազ, ջուր/ նորմաներ և ՔԿՀ-ներում տեղադրել կոմունալ ծախսերի հաշվարկման համար նախատեսված առանձնացված հաշվիչներ :

2. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4212/ ԵՎ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4213/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱԽՍԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների մասով:

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ հաստատվել է ՔԿԾ-ի կոմունալ ծախսերի նորմաները, համաձայն որի քրեակատարողական հիմնարկների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է ծախսերի հետևյալ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆԵԻՉ ՊԼԱՆՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 2021

սահմանաչափերը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝

ա) խմելու ջուր, ջրահեռացում՝ 180 լիտր.

բ) էլեկտրաէներգիա (առանց ջեռուցման և տաք ջրամատակարարման համար ծախսվող էլեկտրաէներգիայի)՝ 5 կվտ/ժ.

գ) էլեկտրաէներգիա՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ 8 կվտ/ժ.

դ) բնական գազ՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ մեկ խոր. մետր:

Ուսումնասիրելով 2021թ. պետական բյուջեի պլանավորման համար քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված էներգետիկ և կոմունալ ծառայությունների բյուջետային հայտերը, պարզվել է, որ բացի դատապարտյալների կամ կալանավորվածների նախատեսվող թվաքանակից, նույն նորմերով պլանավորվել է նաև քրեակատարողական ծառայության աշխատակազմի /քրեակատարողական հիմնարկների աշխատակազմ/ նախատեսվող աշխատակիցների թվաքանակը՝ 1972 մարդ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների հետ, այն է՝ քրեակատարողական հիմնարկների աշխատակազմերը ներառված են մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու նորմաների սահմաններում:

Աղյուսակ 4

Հիմնարկի անվանումը	Աշխատակազմի և դատապարտյալների նախատեսվող թվաքանակ	Էլեկտրաէներգիայի նախատեսվող ծախս /հազ. դրամ/	Ջրամատակարարման և ջրահեռացման նախատեսվող ծախս /հազ. դրամ/	Բնական գազի նախատեսվող ծախս /հազ. դրամ/
Քրեակատարողական հիմնարկներ	2400	267,360.00	28,382.40	121,764.00
ՔԿԾ և <Էրեբունի> հիմնարկների աշխատակազմեր	211	23,505.40	2,495.28	10,705.08
Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներ	1972	219,680.80	23,320.87	100,049.42
Ընդամենը	4583	510,546.20	54,198.55	232,518.50

Արդյունքում 2021թ. համար ավելին է պլանավորվել՝

- Էլեկտրաէներգիայի համար -219,680.8 հազ. դրամ

- Գազամատակարարման համար – 100,049.4 հազ. դրամ
- Ջրամատակարարման և ջրահեռացման համար – 23,320.8 հազ. դրամ:

Բացի այդ նշենք, որ էլեկտրաէներգիայի պլանավորումը իրականացվել է հետևյալ կերպ, 245 օրվա համար մեկ օր մեկ դատապարտյալ՝ 5 կվ/ժ, իսկ 120 օրը՝ 13 կվ/ժամ, տաք ջրամատակարարման և ջերմամատակարարման հաշվարկով, 1 կվ/ժ-միջինով 40 դրամ: Իսկ գազամատակարարման համար նման տարբերակում սահմանված չէ և ամբողջ տարվա համար հաշվարկվել է մեկ օր մեկ դատապարտյալ՝ մեկ խ/մ գազ:

Նշված հաշվարկը առաջացնում է որոշակի անհամապատասխանություններ, այն է, եթե քրեակատարողական հիմնարկի տաք ջրամատակարարումը և ջերմամատակարարումը իրականացվում է էլեկտրաէներգիայի միջոցով և ջերմամատակարարման ժամանակահատվածի համար այն հաշվարկվում է 120 օրը 13 կվ/ժ, նույն հիմնարկում բնական գազի հաշվարկը տաք ջրամատակարարման և ջերմամատակարարման համար կատարվում է մեկ օր՝ մեկ դատապարտյալ՝ մեկ խ/մ գազ: Նույնը վերաբերվում է հակառակ դեպքին: Բացի այդ, եթե տաք ջրամատակարարումը և ջերմամատակարարումը իրականացվում է բնական գազի միջոցով, ապա անհրաժեշտություն է առաջանում տարանջատել նաև բնական գազի նորմաները՝ առանձին ջերմամատակարարման համար և առանձին տաք ջրամատակարարման և ջերմամատակարարման համար՝ հաշվի առնելով ջերմամատակարարման ժամանակահատվածը:

Համաձայն քրեակատարողական ծառայության կողմից հաշվեքննությանը տրամադրված տեղեկանքի, բոլոր քրեակատարողական հիմնարկներում հասանելի է բնական գազի մատակարարումը, սակայն որոշ տեղեր ջերմամատակարարումը իրականացվում է և բնական գազի, և էլեկտրաէներգիայի միջոցով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության արդյունքներով կազմված Արձանագրությամբ նշված 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի հետ կապված անհամապատասխանության խնդիրներն կարելի է փաստել, որ վերացվել է, քանի որ 16.06.2005թ.-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները հաստատվելու մասին» ՀՀ կառավարության N 896-Ա որոշման մեջ՝ 10.03.2022թ.-ին ՀՀ կառավարության N 287-Ա որոշմամբ կատարվել է փոփոխություն և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների աշխատակազմերի համար սահմանվել է էլեկտրական էներգիայի, բնական գազի և խմելու ջրի սպառման նորմատիվային սահմանաչափեր:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի վերացվել: Ներկայացված պարզաբանումը չի ընդունվում հաշվեքննողների կողմից, քանի որ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում գործել է ՀՀ կառավարության 16.06.2005թ.-ի N 896-Ա որոշմամբ սահմանված նորմատիվները և նշված փոփոխությունը չի վերաբերում այդ ժամանակահատվածին:

Եզրակացություն

ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության համար 2021թ.-ին էներգետիկ և կոմունալ ծառայությունների մասով սահմանված նորմաներից ավելին է պլանավորվել՝

- Էլեկտրաէներգիայի գծով -219,680.80 հազ. դրամ
- Գազամատակարարման գծով – 100,049.42 հազ. դրամ
- Զրամատակարարման և ջրահեռացման գծով – 23,320.87 հազ. դրամ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի պահանջների մասով:

**3. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4213/
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված ջրի ծախսի նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև:

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Կոմունալ ծառայություններ» հոդվածով տարեկան ճշգրտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 90,117.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 83,442.69 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 77,570.37 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը փաստացի ծախսից ավելին է 5,872.36 հազ.դրամով:¹

¹ -«Աջակցություն դատապարտյալներին» ՀԿ-ի մասով ավելացվել է դեբիտորական պարտքը 54.36 հազ. դրամով,

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ ՔԿՀ-ների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է խմելու ջրի և ջրահեռացման ծախսերի հետևյալ սահմանաչափը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝ 180 լիտր:

Ուսումնասիրելով հաշվետու ժամանակաշրջանում ՔԿՀ-ների ջրամատակարարման և ջրահեռացման համար իրականացված ծախսերը, պարզվել է, որ փաստացի կատարված ծախսերը գերազանցել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմաները: Տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով՝

-Մարվել է կրեդիտորական պարթից խմելու ջրի և ջրահեռացման համար՝ 5,817.96 հազ. դրամ:

Հ/Հ	ՔԿՀ-ի անվանումը	Հոկտեմբեր		Նոյեմբեր		Դեկտեմբեր		Ընդամենը	
		Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու- թյուն մ³	Գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու- թյուն մ³	Գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու- թյուն մ³	Գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու- թյուն մ³	Գումար /հազ. դրամ/
1.	«Սևան»	-34.72	-5.31	5.40	826.20	-71.62	-10.95	-100.04	-15.30
2.	«Կոշ»	648.46	99.21	767.00	117.35	387.30	59.25	1,802.04	275.71
3.	«Արթիկ»	1,802.74	275.81	1,878.60	287.42	2,142.88	327.86	5,824.76	891.18
4.	«Աբովյան»	1,666.56	299.98	1,860.60	334.90	2,024.40	364.39	5,551.32	999.23
5.	«ԴՀ»	4,869.18	876.45	2,980.00	536.40	5,414.98	974.69	13,262.24	2,387.20
6.	«Նուբարաշեն»	8,811.72	1,586.10	6,690.80	1,204.34	5,471.44	984.85	20,978.88	3,776.19
7.	«Գորիս»	704.74	126.85	1,358.60	244.54	466.36	83.94	2,530.48	455.48
8.	«Վանաձոր»	15.50	2.79	37.20	6.69	-180.82	-32.54	-127.52	-22.95
9.	«Վարդաշեն»	4,223.78	760.28	3,811.20	686.01	3,453.36	621.60	11,487.92	2,067.82
10.	«Հրազդան»	1,822.10	327.97	1,847.60	332.56	2,230.86	401.55	5,896.72	1,061.40
11.	«Արմավիր»	547.42	98.53	2,144.80	386.06	2,214.08	398.53	4,908.04	883.44
	Ընդամենը	25,077.48	4,448.70	23,381.80	4,137.14	23553.22	4,173.19	72,014.84	12,759.44

Ինչպես երևում է աղյուսակից, բոլոր ՔԿՀ-ներում ջրամատակարարման և ջրահեռացման ծախսերը գերազանցում են սահմանված նորմերը, բացառությամբ «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ի: Նշենք, որ «Սևան», «Կոշ» և «Արթիկ» ՔԿՀ-ների հաշվարկը իրականացվել է 153 դրամով, հաշվի առնելով, որ նշված հիմնարկներում ջրահեռացում չի իրականացվում: Հաշվարկների մեջ ներառված չեն քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և «Էրեբունի» ՔԿՀ-ի ծախսերը, հաշվի առնելով, որ այնտեղ տեղակայված են ծառայության աշխատակազմը:

Արդյունքում, 2021 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 313,001.94 խ/մ, գումարով՝ 54,868.2 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 72,014.84 խ/մ, գումարով՝ 12,759.44 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության արդյունքներով կազմված Արձանագրությամբ նշված 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի հետ կապված անհամապատասխանության խնդիրներն կարելի է փաստել, որ վերացվել է, քանի որ 16.06.2005թ.-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները հաստատվելու մասին» ՀՀ կառավարության N 896-Ա որոշման մեջ՝ 10.03.2022թ.-ին ՀՀ կառավարության N 287-Ա որոշմամբ կարարվել է փոփոխություն և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների աշխատակազմերի համար սահմանվել է էլեկտրական էներգիայի, քանական գազի և խմելու ջրի սպառման նորմատիվային սահմանաչափեր:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի վերացվել: Ներկայացված պարզաբանումը չի ընդունվում հաշվեքննողների կողմից, քանի որ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում գործել է ՀՀ կառավարության 16.06.2005թ.-ի N 896-Ա որոշմամբ սահմանված նորմատիվները և նշված փոփոխությունը չի վերաբերում այդ ժամանակահատվածին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված ջրի ծախսի նորմայի և փաստացի ծախսված ջրի քանակի միջև: 2021 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 313,001.94 խ/մ, գումարով՝ 54,868.2 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 72,014.84 խ/մ, գումարով՝ 12,759.44 հազ. դրամ

4. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4212/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ/

Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 717,271.25 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 716,088.28 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 699,527.00 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը փաստացի ծախսից ավելին է 16,561.28 հազ.դրամով:²

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ ՔԿՀ-ների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է էլեկտրաէներգիայի ծախսերի հետևյալ սահմանաչափը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝ էլեկտրաէներգիայի (առանց ջեռուցման և տաք ջրամատակարարման համար ծախսվող էլեկտրաէներգիայի) համար՝ 5 կվտ/ժ, և էլեկտրաէներգիա՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ 8 կվտ/ժ:

Ուսումնասիրելով հաշվետու ժամանակաշրջանում ՔԿՀ-ների էլեկտրաէներգիայի մատակարարման համար իրականացված ծախսերը, պարզվել է, որ ծախսերը

² - Մարվվել է կրեդիտորական պարտքից Էներգախնայողության համար՝ 10,714.08 հազ. դրամ,
- Մարվվել է կրեդիտորական պարտքից գազի սպառման համար՝ 2,475.69 հազ. դրամ,
- Մարվվել է կրեդիտորական պարտքից էլեկտրաէներգիայի սպառման համար՝ 1,184.97 հազ. դրամ,
- «Աջակցություն դատապարտյալներին» ՀԿ-ի մատով ավելացվել է դեբիտորական պարտքը 2,186.52 հազ. դրամով:

գերազանցել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմաները:
Տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով՝

Հ/Հ	ՔԿՀ-ի անվանումը	Հոկտեմբեր		Նոյեմբեր		Դեկտեմբեր		Ընդամենը	
		Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերություն կվ/ժամ	գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերություն կվ/ժամ	գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերություն կվ/ժամ	գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերություն կվ/ժ	գումար /հազ. դրամ/
1.	«Սևան»	66,597.00	2,663.88	52,096.00	2,083.84	65,005.00	2,600.20	183,698.00	7,347.92
2.	«Կոշ»	37,071.00	1,482.84	31,294.00	1,251.76	29,525.00	1,181.00	97,890.00	3,915.60
3.	«Արթիկ»	42,145.00	1,685.80	1,546.00	61.84	2,678.00	107.12	46,369.00	1,854.76
4.	«Աբովյան»	18,813.00	752.52	8,245.00	329.80	9,727.00	389.08	36,785.00	1,471.40
5.	«ԴՀ»	30,405.00	1,216.20	3,600.00	144.00	18,363.00	734.52	52,368.00	2,094.72
6.	«Նուբարաշեն»	36,376.00	1,455.04	-15,972.00	-638.88	-27,172.00	-1,086.88	-6,768.00	-270.72
7.	«Գորիս»	24,357.00	974.28	-13,221.00	-528.84	-11,385.00	-455.40	-249.00	-9.96
8.	«Վանաձոր»	25,375.00	1,015.00	18,240.00	729.60	20,763.00	830.52	64,378.00	2,575.12
9.	«Վարդաշեն»	15,745.00	629.80	-6,400.00	-256.00	-2,884.00	-115.36	6,461.00	258.44
10.	«Հրազդան»	19,655.00	786.20	-27,050.00	-1,082.00	-6,409.00	-256.36	-13,804.00	-552.16
11.	«Արմավիր»	-17,296.00	-691.84	-210,258.00	-8,410.32	-228,427.00	-9,137.08	-455,981.00	-18,239.24
	Ընդամենը	299,243.00	11,969.72	-157,880.00	-6,315.20	-130,216.00	-5,208.64	11,147.00	445.88

Ինչպես երևում է աղյուսակից, էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը ՔԿՀ-ներում, հիմնականում գերազանցում են սահմանված նորմաները, բացառությամբ «Արմավիր», «Նուբարաշեն», «Գորիս» և «Հրազդան» ՔԿՀ-ի:

Արդյունքում, 2021 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 661,503.33 կվ/ժ, գումարով՝ 26,460.07 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 11,147.00 կվ/ժ, գումարով՝ 445.88 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության արդյունքներով կազմված Արձանագրությամբ նշված 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի հետ կապված անհամապատասխանության խնդիրներն կարելի է փաստել, որ վերացվել է, քանի որ 16.06.2005թ.-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակադրոդական ծառայության կապի միջոցների փեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները հաստատվելու մասին» ՀՀ կառավարության N 896-Ա որոշման մեջ՝ 10.03.2022թ.-ին ՀՀ կառավարության N 287-Ա որոշմամբ կատարվել է փոփոխություն և ՀՀ ԱՆ քրեակադրոդական հիմնարկների աշխատակազմերի համար սահմանվել է էլեկտրական էներգիայի, բնական գազի և խմելու ջրի սպառման նորմատիվային սահմանաչափեր:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի վերացվել: Ներկայացված պարզբանումը չի ընդունվում հաշվեքննողների կողմից, քանի որ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում գործել է ՀՀ կառավարության 16.06.2005թ.-ի N 896-Ա որոշմամբ սահմանված նորմատիվները և նշված փոփոխությունը չի վերաբերում այդ ժամանակահատվածին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև: 2021 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված

նորմաներից ավելին է կազմել 661,503.33 կվ/ժ, գումարով՝ 26,460.07 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 11,147.00 կվ/ժ, գումարով՝ 445.88 հազ. դրամ:

**5. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4212/
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԲՆԱԿԱՆ ԳԱԶ/**

Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի ծախսի նորմաների և փաստացի ծախսված քանակի միջև

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 717,271.25 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 716,088.28 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 699,527.00 հազ.դրամ:

ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշմամբ ՔԿՀ-ների համար, ներառյալ դրանց աշխատակազմերը, սահմանվել է բնական գազի ծախսի հետևյալ սահմանաչափը՝ մեկ օր՝ մեկ դատապարտյալին կամ կալանավորվածին պահելու համար՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար՝ 1 խ/մ:

Ուսումնասիրելով հաշվետու ժամանակաշրջանում ՔԿՀ-ների էլեկտրաէներգիայի մատակարարման համար իրականացված ծախսերը, պարզվել է, որ ծախսերը գերազանցել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նորմաները: Տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակով՝

Հ/Հ	ՔԿՀ-ի անվանումը	Հոկտեմբեր		Նոյեմբեր		Դեկտեմբեր		Ընդամենը	
		Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու թյուն մ ³	Գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու թյուն մ ³	Գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու թյուն մ ³	Գումար /հազ. դրամ/	Պլանային և փաստացի ցուցանիշների տարբերու թյուն մ ³	Գումար /հազ. դրամ/
1.	«Սևան»	-2,604.00	-361.95	4,631.00	643.70	10,621.00	1,476.31	12,648.00	1,758.07
2.	«Կոշ»	-1,884.00	-261.87	8,437.00	1,172.74	7,853.00	1,091.56	14,406.00	2,002.43
3.	«Արթիկ»	-1,039.00	-144.42	21,738.00	3,021.58	26,425.00	3,673.07	47,124.00	6,550.23
4.	«Աբովյան»	-46.00	-6.39	10,626.00	1,477.01	19,746.00	2,744.69	30,326.00	4,215.31
5.	«ԴՀ»	-3,999.00	-555.86	9,408.00	1,307.71	11,644.00	1,618.51	17,053.00	2,370.36
6.	«Նուբարաշեն»	-9,584.00	-1,332.17	1,066.00	148.17	3,642.00	506.23	-4,876.00	-677.76
7.	«Գորիս»	-2,560.00	-355.84	5,615.00	780.48	7,971.00	1,107.96	11,026.00	1,532.61
8.	«Վանաձոր»	-1,273.00	-176.94	-1,016.00	-141.22	-1,017.00	-141.36	-3,306.00	-459.53
9.	«Վարդաշեն»	-3,203.00	-445.21	2,935.00	407.96	3,777.00	525.00	3,509.00	487.75
10.	«Հրազդան»	-3,490.00	-485.11	3,529.00	490.53	4,584.00	637.17	4,623.00	642.59
11.	«Արմավիր»	-22,560.00	-3,135.84	19,049.00	2,647.81	21,440.00	2,980.16	17,929.00	2,492.13
	Ընդամենը	-52,242.00	-7,261.63	86,018.00	11,956.50	116,686.00	16,219.35	150,462.00	20,914.21

Ինչպես երևում է աղյուսակից բնական գազի մատակարարման ծախսերը, բացառությամբ «Գորիս» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկների, էականորեն գերազանցում են սահմանված նորմերը: Հաշվարկների մեջ ներառված չեն քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և «Էրեբունի» հիմնարկի ծախսերը, հաշվի առնելով, որ այնտեղ տեղակայված են ծառայության աշխատակազմը:

Արդյունքում, 2021 թվականի ընթացքում բնական գազի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 500,827.00 խ/մ, գումարով՝ 68,278.11 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 150,462.00 խ/մ, գումարով՝ 20,914.21 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի ծախսի նորմաների և փաստացի ծախսված քանակի միջև:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության արդյունքներով կազմված Արձանագրությամբ նշված 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի հետ կապված անհամապատասխանության խնդիրներն կարելի է փաստել, որ վերացվել է, քանի որ 16.06.2005թ.-ի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները հաստատվելու մասին» ՀՀ կառավարության N 896-Ա որոշման մեջ՝ 10.03.2022թ.-ին ՀՀ կառավարության N 287-Ա որոշմամբ կատարվել է փոփոխություն և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների աշխատակազմերի համար սահմանվել է էլեկտրական էներգիայի, բնական գազի և խմելու ջրի սպառման նորմատիվային սահմանաչափեր:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի վերացվել: Ներկայացված պարզբանումը չի ընդունվում հաշվեքննողների կողմից, քանի որ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում գործել է ՀՀ կառավարության 16.06.2005թ.-ի N 896-Ա որոշմամբ սահմանված նորմատիվները և նշված փոփոխությունը չի վերաբերում այդ ժամանակահատվածին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի ծախսի

նորմաների և փաստացի ծախսված քանակի միջև: 2021 թվականի ընթացքում բնական գազի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 500,827.00 խ/մ, գումարով՝ 68,278.11 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 150,462.00 խ/մ, գումարով՝ 20,914.21 հազ. դրամ:

6.1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» /4251/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կրկնվող կետ

Առկա են անհամապատասխանություններ.

- ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 1-ին բաժնի 2-րդ կետի և 6-րդ կետի 4-րդ ենթակետի «Ժ» պարբերության մասի պահանջների հետ,
- ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի պահանջների հետ,
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջեային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5 հրամանի հավելված 16-ի պահանջների հետ,
- 2021 թվականի հունվարի 25-ին ՔԿԾ-ի և «Սուբաշին» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-21/1 պայմանագրի պահանջների հետ,
- «ՀՀ Կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման պահանջների հետ:

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով տարեկան ճշգրտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 69,000.00 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է՝ 68,732.85 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 69,829.87 հազ.դրամ, որը իր մեջ ներառում է կապալառուի կողմից ներկայացված կատարողական ակտերի և ՔԿԾ-ի պահեստից ծախսված շինանյութերի գումարը:³

ՔԿԾ-ի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Սուբաշին» ՍՊԸ-ն, որի հետ 2021 թվականի հունվարի 25-ին կնքվել է պայմանագիր: Պայմանագրով կատարման ենթակա աշխատանքների գումարը կազմել է 69,000.00 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

Ստորև աղյուսակում ներկայացվում է «Սուբաշին» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի ընթացքում ՔԿԾ-ի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով իրականացված ծախսերն՝ ըստ ՔԿՀ-ների:

Աղյուսակ 8 *հազ.դրամ*

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկ	Կատարողական ակտերի համարներ	Փաստացի ծախսեր ըստ կատարողականի
1	ՔԿԾ	2,10,26,37,53,55	2,478.15
2	Էրեբունի	1	690.20
3	Երևան-կենտրոն	3,11,18	289.21
4	Կոշ	4,15,17,23,31,41	8,002.60
5	Արմավիր	5,9,22,27,40,42,51,	20,440.27
6	Աբովյան	6,8,16,30,38,50	1,094.83
7	Արթիկ	7,21,28,34,44,48	2,995.03
8	Նուբարաշեն	12,19,24,32,47,59	24,315.09
9	Հրազդան	13,25,43	603.45
10	Դատապարտյալների հիվանդանոց	14,36,54	1,344.70
11	Վանաձոր	20,35,46,52,58	2,154.28
12	Վարդաշեն	29,39,45,49,60	2,382.10
13	Գորիս	56	1,412.39
14	Սևան	33,57	530.55
Ընդամենը			68,732.85

³ Սուբաշին ՍՊԸ-ի կողմից ներկայացված 69,829.87 հազ.դրամ կատարողական ակտերի գումարը հաշվի է առնվել ծառայության կողմից և ամբողջությամբ վճարված է:

Հաշվեքննիչ պալատի կողմից ՔԿԾ-ում իրականացված 2021 թվականի երեք, վեց, ինը և տարեկան հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել են անհամապատասխանություններ: Այսպես՝

1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի պահանջների հետ: Մասնավորապես՝ «Արմավիր» ՔԿՀ-ում թիվ 40 կատարողական ակտով, գումարով՝ 16,516.64 հազ.դրամ, «Սուբաշին» ՍՊԸ-ի կողմից վարչական մասնաշենքերի տանիքների ապամոնտաժման աշխատանքների համար չեն կազմվել պիտանելիության, որակի գնահատման և ընդունման-հանձնման ակտեր:

2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետի «Ժ» պարբերության մասով՝ շենքերում ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքները կտուրների և ծածկերի մասով պետք է իրականացվի կտուրների ընդհանուր մակերեսի մինչև 30 տոկոսի չափով, մինչդեռ աշխատանքներն իրականացվել են ամբողջ ծավալով: Մասնավորապես՝ թիվ 40 կատարողական ակտով «Արմավիր» ՔԿՀ-ում իրականացվել է 1542 քմ մակերեսով տանիքների վերանորոգում և վերակառուցում, որից վարչական մասնաշենքի տանիքը վերանորոգվել է ամբողջությամբ՝ 1400 քմ մակերեսով, գումարով՝ 16,516.64 հազ.դրամ:

3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5 հրամանի հավելված 16-ի պահանջների հետ: Մասնավորապես՝ «Կոշ» ՔԿՀ-ում, թվով 2 կատարողական ակտերով իրականացված 630 ԿՎԱ տրանսֆորմատորի, էլեկտրական սարքավորումների և մոնտաժման աշխատանքների արժեքը գումարով՝ 4,384.08 հազ.դրամ, և «Արմավիր» ՔԿՀ-ում թիվ 40 կատարողական ակտով վարչական մասնաշենքի տանիքի կապիտալ վերանորոգումը, գումարով՝ 16,516.64 հազ.դրամ, «Շենքերի և կառույցների ընթացիկ

նորոգում և պահպանում» 4251 հոդվածի փոխարեն պետք է իրականացվեր տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածով: Հետևաբար, վերոնշյալ ապրանքների և աշխատանքների ձեռքբերման համար պետք է կազմակերպվեր գնման նոր ընթացակարգ՝ ՀՀ գնումների օրենսդրության համաձայն:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՔԿՀ-ներում իրականացվում են բազմաբնույթ և ոչ տիպային աշխատանքներ՝ կալանավորված և դատապարտված անձանց կենցաղային պայմանների բարելավման նպատակով:

ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 1-ի 1-ին բաժնի 4-րդ գլխի 27-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապարտողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների: Մատակարար կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքների անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման դեպքերը համարվում են շինարարության թույլտվություն չպահանջող գործառնություն, ընդ որում, այդ աշխատանքները կարող են սկսվել միայն իրավասու մարմնին տեղեկացնելուց հետո:

Այդ կապակցությամբ 25.01.2021 թվականին կնքված թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ - 21/1 պայմանագրում աշխատանքների ծավալները նախատեսված չեն, ինչպես նաև հաստատված չեն բոլոր շինարարական աշխատանքների և նրանցում օգտագործվող շինարարական նյութերի և ապրանքների, սարք սարքավորումների միավորի արժեքները: Կնքված պայմանագրով կապալառուի կողմից ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքները կատարվում են ՔԿԾ-ի կողմից ներկայացված հայտերի հիման վրա, ՔԿՀ - ներում շենքերի և շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման հիմք են հանդիսացել՝ որպես հայտ կամ թերությունների ակտ, ՔԿՀ-ներից ուղարկված պաշտոնական գրությունները, որտեղ նշված են կոնկրետ թերությունները և դրանց հետևանքով առաջացած բարդությունները: Վերջում յուրաքանչյուր կատարված աշխատանքի արդյունքում կազմվում են կատարողական ակտեր, կատարված աշխատանքների քանակական ակտեր և հանձնման-ընդունման արձանագրություններ:

1. ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակարարողական հիմնարկի տրանսֆորմատորային ենթակայանի վերանորոգում.

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի կողմից տրանսֆորմատորային սարքավորման ձեռք բերում չի իրականացվել, ՔԿՀ-ի հաշվեկշռում առկա այրավծ տրանսֆորմատորային ենթակայանը վերանորոգվել է համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ - 21/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով նույն ծածկագրով պայմանագրին կից տեխնիկական բնութագրի Ծանոթություն բաժնի 7 կետի «Չնախատեսված վթարների դեպքում անհետաձգելի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար, Կատարողը, Պատվիրատուի ահազանգման դեպքում, պետք է արագ արձագանքի (ցանկացած օր և ժամի, վթարված էլ. էներգիայի, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի և նմանատիպ այլ վթարների վերացման և արագ վերականգնման նպատակով) և վթարավերականգնողական աշխատանքներն իրականացնի առնվազն 8 ժամվա ընթացքում»:

Ելնելով ՔԿՀ-ի սպեցիֆիկ նշանակությունից, ինչպես նաև տրանսֆորմատորային ենթակայանի խափանման օրվանից և ժամից (05.03.2021թ. ժամը 07:30-ին), հիմնարկում հոսանքազրկվել էին՝ կաթսայատունը, պահպանության և անվտանգության ապահովման բոլոր համակարգերը, ճաշարանի մասնաշենքը և մնացած բոլոր մասնաշենքերը: Հրդեհաշիջման աշխատանքների ավարտից հետո կապալառու կազմակերպություն մասնագետների ու պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների համարեղ ջանքերով հիմնարկի էլեկտրամատակարարումը վերականգնվեց 06.03.2021թ-ի ժամը 01:00: ՔԿՀ-ի էլեկտրամատակարարումը ժամանակավորապես ապահովել է էլեկտրական գեներատորը, որը գործի է դրվել 05.03.2021թ-ի երեկոյան ժամը 19:05-ից մինչև 06:03.2021թ-ի ժամը 01:00-ը: Տրանսֆորմատորային ենթակայանի վերջնական վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին 07.03.2021 թվականին՝ ենդիանուր **2,609.48 հազ. դրամ**, կատարված աշխատանքների թիվ 15 կատարողական ակտ:

ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ում կատարված աշխատանքների թիվ 23 կատարողական ակտը ամբողջությամբ վերաբերվում է նույն հիմնարկը սպասարկող էլեկտրական ենթակայանի խմբային բաշխիչ և ապահովիչ վահանակների նորոգմանը՝ ընդամենը **1 774 599 ՀՀ դրամ**, համաձայն՝ ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թուլությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 1-ին ցանկի 2-րդ գլխի 6-րդ կետի 13-րդ ենթակետի սահմանված էլեկտրալուսավորում և կապ՝ «է. խմբային բաշխիչ և ապահովիչ վահանակների մանր նորոգում»:

2. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկ.

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ից տանիքների վերանորոգման համար ՔԿԾ 29.01.2021 թ-ին ուղարկվել է զեկուցագիր, իսկ 05.08.2021 թ-ին գրություն՝ համապատասխան թերությունների ակտով: Թիվ 40 կատարողական ակտում 1 542 քմ մակերեսի մեջ ընդգրկված են՝ վարչական

մասնաշենքի տանիքը – 1400 քմ, նիստերի դահլիճի տանիքը – 27 քմ, ճաշարան-վացքատան հատվածի տանիքը – 85 քմ, կենտրոնական կաթսայատան տանիքը – 30 քմ, ընդհամենը 1 542 քմ: ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի տանիքի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 22 000 քմ, ուստի վերանորոգված հատվածը, ընդհանուր տանիքի մակերեսից, կազմում է ընդհամենը 7 %, որը չի հակասում ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետի «Ժ» պարբերությանը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

1. Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումները ընդունելի չեն: Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումն այն մասին, որ Արմավիր ՔԿՀ-ում վարչական մասնաշենքի տանիքի նորոգման աշխատանքները դասվում են ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին, համաձայն՝ ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման հավելված 1-ի 1-ին բաժնի 4-րդ գլխի 27-րդ կետի 1-ին ենթակետի, չի համապատասխանում նույն որոշման հավելված 4-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետի «Ժ» պարբերության մասի պահանջին, այն է՝ «շենքերում ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքները կտուրների և ծածկերի մասով պետք է իրականացվի կտուրների ընդհանուր մակերեսի մինչև 30 տոկոսի չափով»:

Համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 16-ի, եթե հիմնական միջոցի ծախսումները կապված են ակտիվի մասի /բաղկացուցիչ/ փոխարինման հետ, ապա այդ մասը պետք է ճանաչվի որպես հիմնական միջոցների միավորի մաս /այսինքն՝ կապիտալացվի/: Փոխարինված մասի /բաղկացուցիչ/ հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է:

Համաձայն ՀՀՄՍ 16-ի, Արմավիր ՔԿՀ-ի շենք-շինությունները պետք է հաշվառվեն հիմնական միջոցների նույն դասի մեջ, սակայն տվյալ դասում, յուրաքանչյուր առանձին շինություն պետք է հաշվառվեն որպես առանձին հիմնական միջոց: Հետևաբար, կատարված աշխատանքները ոչ թե պետք է վերագրվի հիմնական միջոցի ամբողջ դասին, այլ տվյալ հիմնական միջոցին, որի համար կատարվել են ծախսումները: Այսինքն՝ Արմավիր ՔԿՀ-ի վարչական շենքի 1400 քմ մակերեսի հիմնանորոգման համար կատարված ծախսումները պետք է կապիտալացվեն:

2. Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումները ընդունելի չեն, քանի որ հաշվեքննության արձանագրությունը կազմվել է ներկայացված փաստաթղթերի հիման վրա, որի համաձայն առկա է հիմնական միջոցի տեղադրում՝ առանց նորոգման նյութերի: Այլ փաստաթղթեր, որոնք կվերաբերեին տրանսֆորմատորային ենթակայանի վերանորոգման աշխատանքներին, չեն ներկայացվել:

Եզրակացություն

1. «Արմավիր» ՔԿՀ-ում վարչական մասնաշենքի տանիքի վերանորոգումը «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածի փոխարեն իրականացվել է «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5 հրամանի հավելված 16-ի պահանջների հետ, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 1-ին բաժնի 2-րդ կետի և 6-րդ կետի 4-րդ ենթակետի «Ժ» պարբերության մասի պահանջների հետ:

2. Ապամոնտրված տանիքի համար չի կազմվել պիտանելիության, որակի գնահատման և ընդունման-հանձնման վերաբերյալ ակտ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի պահանջների հետ:

3. Տեղադրված նոր տրանսֆորմատորային ենթակայանի ձեռքբերումը չի իրականացվել գնումների օրենսդրությանը համապատասխան: Առկա է անհամապատասխանություն «ՀՀ Կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման պահանջների հետ:

7. 1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ» /4264/
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կրկնվող կետ

Առկա են անհամապատասխանություններ.

- ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ-ի 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի /Ձև՝ ԾԽ- 6 և ԾԽ-7/ հետ,
- ՀՀ ֆինանսների նախարարի 09.03.2016թ-ի 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7 կետի հետ:

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Տրանսպորտային նյութեր» հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 78,179.32 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է՝ 78,179.21 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 67,462.90 հազ.դրամ:⁴

Տրանսպորտային միջոցների և վառելիքի վերաբերյալ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 01.01.2021թ-ից 31.12.2021թ-ի դրությամբ ՔԿԾ-ի հաշվեկշռում հաշվառված է թվով 85-միավոր ավտոմեքենա, որից 78 միավոր տրանսպորտային միջոց շահագործվող, չշահագործվող թվով 7, օտարվել է թվով 1 շահագործվող և թվով 4 չշահագործվող տրանսպորտային միջոց: «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին ի պահ է տրվել ՔԿԾ-ի հաշվեկշռում հաշվառված HYUNDAI HD – 65 մակնիշի 074 SS 03 պետ համարանիշի շարժական ռենտգեն սարքավորում մեքենան, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքները հոգալու համար: ՀՀ ԱՆ ՔԿԾ պետի 19.05.2021 թ. թիվ 251-Ա հրամանի շարժական միավոր մեքենաների գույքագրումը իրականացվել է ՔԿ ծառայության կենտրոնական հիմնարկում, որտեղ առկա է թվով 35 միավոր

⁴ Դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունը պայմանավորված է պահեստում առկա վառելիքի մնացորդով:

տրանսպորտային միջոց. Թվով 12 քրեակատարողական հիմնարկներում շարժական մեքենաների վերաբերյալ գույքագրումը իրականացվել է ՔԿԾ պետի N 724 –Ա հրամանով 20 դեկտեմբեր 2021 թվականին: Պատասխանատու անձի կողմից վառելիքը բաշխվել է վարորդներին և ավտոմեքենաների պատասխանատու անձանց, կտրոններով՝ ամսական կտրվածքով, ինչպես նաև ուղեթերթիկների հաշվառումը ևս իրականացվել է ամսական կտրվածքով: Ըստ պատասխանատուի՝ վազքը ուղեթերթիկներում լրացվել է վարորդներին տրված վառելիքի կտրոնների համաձայն, իսկ ավտոուղեգրերը, ելնելով նախորդ տարիների վառելիքի միջինացված ծախսերից, լրացվել են՝ հետհաշվարկ կատարելով վառելիքի ընդհանուր քանակությունից: ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N 1001-Ն որոշման մեջ ՔԿԾ-ի և քրեակատարողական հիմնարկներում առկա ծառայողական ավտոմեքենաների վառելիքի նորմաները արտացոլված չեն: Հաշվեքննությամբ պարզվել է, որ ՔԿԾ-ն չի դիմել ՀՀ կառավարություն՝ մեքենաների վառելիքի ծախսի նորմատիվների կարգավորման վերաբերյալ: Հետևաբար՝ նշված վառելիքի ծախսը, որևէ իրավական ակտով չի կարգավորվում: Չի պահպանվել գրանցամատյանների, երթուղային ուղեգրերի օրինակելի ձևերը, այն է՝ ավտոմեքենաների երթուղային ուղեգրերի վրա բացակայում են բժշկի և մեխանիկի ստորագրության դաշտը, և քրեակատարողական հիմնարկների ավտոմեքենաների ուղեգրերը հերթական համարակալում չունեն: Թվով 5՝ «Վարդաշեն», «Նուբարաշեն», «Արմավիր», «Վանաձոր» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների ավտոմեքենաների ուղեգրերը համարակալված չեն, իսկ «Արթիկ», «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկների ավտոմեքենաների ուղեգրերի հետնամասում բացակայում են ավտոմեքենաներից օգտվողների ստորագրությունները և օրական կատարված վազքի ցուցմունքը: Հարկ է նշել, որ պատասխանատու անձանց կողմից գրագրությունների օրինակելի ձևը չի պահպանվել և կատարվել է թերի:

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ-ի 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի /Ձև՝ ԾԽ- 6 և ԾԽ-7/ և ֆինանսների նախարարի 09.03.2016թ-ի 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7 կետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի տրանսպորտային միջոցների վառելիքի հատկացման ժամանակ տվյալ տրանսպորտային միջոցի նյութական պատասխանատու անձը ամսվա առաջին աշխատանքային օրը ներկայացնում է նախորդ ամսվա լրացված ուղեգիրը (որտեղ արտացոլվում է հատկացված վառելիքի տրամադրման օրը, չափաքանակը, նախորդ ամսվա սկզբի և վերջի դրությամբ վառելիքի մնացորդները, տվյալ ամսվա կատարված վազքը, տվյալ ամսվա սկզբի և վերջի դրությամբ վազքաչափի ցուցիչի ցուցմունքները, օրեկան կատարված երթերի ուղղությունները և ժամերը, ինչպես նաև տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը):

ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի տրանսպորտային միջոցների ուղեգրերը ՀՀ Ֆինանսների նախարարի 2016 թվականի N37-Ն Հրամանի ԾԽ-6 ձևաչափից տարբերվում են միայն բժշկի և մեխանիկի ստորագրության բացակայությունով, քանի որ ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմինը բժշկ և մեխանիկ չունի: ՀՀ ԱՆ ՔԿԾ բոլոր ծառայողները տարին մեկ անգամ անցնում են կանխարգելիչ բուժ. զննում, իսկ տրանսպորտային միջոցների թերությունների հայտնաբերումը և տեխնիկական սպասարկումը իրականացնում է ծառայության տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ մատուցող «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ –ի կողմից:

ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի կենցաղային ապահովման բաժնի կողմից վառելիքի շարժի համար հատուկ մատյան չի վարվում, քանի որ վառելիքի ծախսի, մուտքերի, ելքերի և մնացորդների վերաբերյալ ամեն ամիս հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի ֆինանսական բաժնի: ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի կենցաղային ապահովման բաժնի կողմից ամենամսյա հաշվետվությունների, բաշխման հաստատված չափաքանակների, մուտքերի և ելքերի հաշիվ-ապրանքագրերի, պահանջագրերի, ինչպես նաև հավելյալ հատկացված վառելիքի հիմքերի երկրորդ օրինակներն ու պատճենները հավաքագրվում և պահվում է հատուկ հատկացված թղթապանակում: Ինչ վերաբերվում է ՀՀ ԱՆ ՔԿԾ ուղեգրերի համարակալման բացակայությանը՝ համապատասխան քրեակատարողական հիմնարկները զգուշացվել են՝ հետագա նմանատիպ բացթողումները բացառելու նպատակով:

ՀՀ ԱՆ ՔԿԾ-ների և ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի տրանսպորտային միջոցների վազքաչափի ցուցիչների ցուցմունքները և սաքինությունը պարբերաբար ստուգվում են՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնի Կենցաղային ապահովման բաժնի աշխատակիցների/ծառայողների կողմից անսպասելի այցերի և ստուգումների միջոցով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումը չի ընդունվում հաշվեքննողների կողմից, քանի որ չեն պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի

01.02.2016թ-ի 37-Ն հրամանի 48-րդ կետի և 09.03.2016թ-ի 142-Ա հրամանի 7.7 կետի պահանջները:

Վ. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

8.1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» /4236/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ
ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կրկնվող կետ

Առկա է խեղաթյուրում 5,565.54 հազ. դրամ գումարի չափով:

Ծրագրի վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունները, հաշվեքննության օբյեկտի արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը, եզրակացությունը, ինչպես նաև առաջարկությունը ներկայացված է ընթացիկ եզրակացության «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» մասի 1-ին կետում: Առկա անհամապատասխանությունները հանգեցրել են խեղաթյուրման:

ՔԿՀ-ների 2021 թվականին աշխատող 15 դատապարտյալների՝ ճաշարանի, խոհանոցի բանվոր և խոհարարի օգնականի հաստիքների մասով հաշվարկված աշխատավարձի գումարները խեղաթյուրված են՝ 5,565.54 հազ. դրամ:

9.1120-11001՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» /4251/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կրկնվող կետ

Առկա է խեղաթյուրում 20,900.72 հազ.դրամ գումարի չափով:

Ծրագրի վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունները, հաշվեքննության օբյեկտի արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը, ինչպես նաև եզրակացությունը ներկայացված է ընթացիկ եզրակացության «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» մասի 6-րդ կետում: Առկա անհամապատասխանությունները հանգեցրել են խեղաթյուրման.

- Կոշ» ՔԿՀ-ի 630 ԿՎԱ տրանսֆորմատորի, էլեկտրական սարքավորումների և մոնտաժման աշխատանքների մասով՝ **4,384.08 հազ.դրամ,**
- «Արմավիր» ՔԿՀ-ի վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցման մասով՝ **16,516.64 հազ.դրամ:**

VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

10. 1120-31002՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ» /5122/ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ ԿՆՔՎԱԾ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Վերացված անհամապատասխանությունների և
խեղաթյուրումների վերաբերյալ**

Անհամապատասխանություններ՝

- 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ է) պարբերության մասով,
- Գնման հայտով ներկայացված միավորի գնի և նախագծողի կողմից հաշվարկված Տեսահսկման համակարգի միավորի գնին համարժեք փոխարժեքի միջև:

Նշված անհամապատասխանությունները հանգեցրել են խեղաթյուրման՝ 52,879.94 հազ. դրամ գումարի չափով

ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման հաշվետվության համաձայն, «Վարչական սարքավորումներ» հոդվածով տարեկան ճշգրտված պլանով նախատեսվել է ՔԿԾ-ին հատկացնել 586,998.80 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է՝ 146,749.70 հազ.դրամ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի, Արմավիր ՔԿՀ-ի տեսադիտման և տեսահսկման արդի համակարգի /այսուհետ՝ Տեսահսկման համակարգ/ ձեռքբերման նպատակով ՔԿԾ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Էլլիպս Զիէյ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի փետրվարի 1-ին կնքվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1 պայմանագիրը՝ **586,998.80** հազ.դրամի չափով:

ՔԿԾ-ի կողմից իրականացված վերոնշյալ գնման ընթացակարգի մասով ինն ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները: Այսպես՝

1. Առկա է անհամապատասխանություն գնման հայտով ներկայացված միավորի գնի և նախագծողի կողմից հաշվարկված Տեսահսկման համակարգի միավորի գնին համարժեք փոխարժեքի միջև: Արմավիր ՔԿՀ-ի Տեսահսկման համակարգի ձեռքբերման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումն իրականացվել է «Հէքս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից: Տեսահսկման համակարգի արժեքը ըստ նախագծողի 2020 թվականի օգոստոսի 7-ի դրությամբ կազմել է 917,730 եվրո, համարժեք **534,118.86** հազ. ՀՀ դրամ: Պատասխանատու ստորաբաժանման կողմից նույն գումարի չափով ներկայացվել է գնման հայտ: Սակայն 2020 թվականի օգոստոսի 7-ի դրությամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 եվրոյի փոխարժեքը կազմել է 573.17 դրամ, հետևաբար Տեսահսկման համակարգի արժեքը 2020 թվականի օգոստոսի 7-ի դրությամբ կկազմի **526,015.30** հազ.դրամ /917,730 *573.17/, **կամ նախագծողի կողմից 917,730 եվրոյին համարժեք դրամը նույն օրվա դրությամբ 8,103.56 հազ.դրամով** ավելի է հաշվարկվել:

2. Առկա է անհամապատասխանություն 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն /այսուհետ՝ Թիվ 526-Ն Որոշում/ որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ է) պարբերության մասով՝ «բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած...»: ՔԿԾ-ն հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է հայտով սահմանված գինը «Էլլիպս Զիէյ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի փետրվարի 1-ին կնքել է թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊԶԲ-21/1 ծածկագրով պայմանագիր **586,998.80** հազ.դրամի չափով: **Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է խեղաթյուրման՝ 52,879.94 հազ. դրամ գումարի չափով:**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված հիմնավորման համաձայն ՀՀ կառավարությունը 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1144-Ն որոշմամբ, հոդվածային վերաբաշխման միջոցով, ՔԿԾ-ին հատկացրել է 586,998.80 հազ.դրամ:

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1144-Ն որոշման համաձայն 2021 թվականի հուլիսի 21-ին ՔԿԾ-ի և «Էլլիպս Զիէյ» ՍՊԸ-ի միջև կնքվել է համաձայնագիր: Համաձայնագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի դեկտեմբերի 25-ը, ինչպես նաև սահմանվել է կանխավճարի հատկացում Պայմանագրի գնի 25 տոկոսի չափով՝ 146,749.70 հազ. դրամ և 2021 թվականի հուլիսի 23-ի հանձնարարագրի համաձայն կատարողին է փոխանցվել վերը նշված կանխավճարը:

ՔԿԾ-ում իրականացված 2021 թվականի տարեկան հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ ՔԿԾ-ն, հաշվի առնելով ինն ամիսների հաշվեքննության ընթացքում **արձանագրված** անհամապատասխանություններն և խեղաթյուրումը՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ին «Էլլիպս Զիէյ» ՍՊԸ-ի հետ կնքել է լրացուցիչ համաձայնագիր և գնման հայտով սահմանված գնից 52,998,79 հազ.դրամով ավելի կնքված պայմանագրի գինը նվազեցրել է նույն գումարի չափով, սահմանելով՝ 534,000.00 հազ.դրամ: Միաժամանակ ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2022 թվականի հունվարի 24-ը ներառյալ:

Համաձայն հաշվեքննողներին տրամադրված տեղեկատվության, «Էլլիպս Զիէյ» ՍՊԸ-ն ապրանքների մատակարարել է համաձայնագրով սահմանված ժամկետում: ՔԿԾ-ն 2022 թվականի փետրվարի 2-ին դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ծրագրի ֆինանսավորման համար ՀՀ կառավարության որոշման նախագիծ ներկայացնելու և Կառավարության պահուստային ֆոնդից ՔԿԾ-ին լրացուցիչ 387,250.30 հազ.դրամ գումար հատկացնելու համար, /հաշվի է առնվել 52,998,79 հազ.դրամ գումարը/ որը իրենից ներկայացնում է համաձայնագրով սահմանված նոր պայմանագրային գնի և վճարված կանխավճարի տարբերությունը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության կարիքների համար՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկում տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ներդրման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2020 թ.-ի ընթացքում իրականացվել է գնման ընթացակարգ, որի հաղթող մասնակցի՝ «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի, հետ 29.06.2020թ.-ին կնքվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր՝ 100000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Նշված փաստաթղթերը կազմվել են «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից և 2020 թվականի օգոստոս ամսին հանձնվել են ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայությանը, որտեղ հստակ ներկայացված են անհրաժեշտ սարքավորումների բնութագրերը, քանակները և մոնտաժման էսքիզները: Իսկ գումարային

հաշվարկներում՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի նախահաշվում, հաշվարկները կատարված էին Եվրոյի փոխարժեքով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ համակարգում օգտագործվող բոլոր սարքավորումները արտասահմանյան արտադրության են: Նախահաշվի եզրափակիչ մասում «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն կատարել է հետևյալ գրառումը՝ «... հիմք ընդունելով իրականացված միջազգային մի քանի ոլորտային հեղինակավոր կազմակերպությունների հարցումների արդյունքում ստացված արժեքները՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման և ներդրման համար նախնական հաշվարկներով կապահանջվի մոտ 917,730 (ինը հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր երեսուն) Եվրո գումար ...», որը համաձայն 07.08.2020թ.-ի ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի կազմում է՝ 534,118,860 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Հետևաբար՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման ընդհանուր արժեքի հաշվարկների հիմքը կազմել է 917,730 Եվրո գումարը, որը հաստատվում է և կախված Եվրոյի փոխարժեքից կարող է ամեն օր փոփոխվել, ինչը նշանակում է, որ հաստատվում նախահաշվային արժեք՝ արտահայտված ՀՀ դրամով, Քրեակատարողական ծառայությունը չի ունեցել:

ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպվող գնման ընթացակարգը իրականացվել է առանց ֆինանսական միջոցների առկայության, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն և նշված ձևով գնման ընթացակարգը կազմակերպելիս՝ գնման հայտում նախահաշվային արժեք նշելը պարտադիր չէ և կարող է չնշվել, իսկ գնման առարկայի ձեռքբերման արժեքը գոյանում է մրցույթի արդյունքում:

2021թ.-ի հունվարի 8-ին, ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկում տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված գնման հայտերի բացման նիստից հետո, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման և ներդրման համար նախնական հաշվարկներով կատարված գնային հաշվարկի հիմքերը (սկզբնաղբյուրը)՝ «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից կազմված նախահաշվային փաստաթղթերը, որտեղ որպես հաշվարկային արժեք ներկայացված է 917,730 Եվրո գումարը: Փաստաթղթերի ներկայացման նպատակն էր՝ գնահատող հանձնաժողովը մասնակիցների գնային առաջարկները գնահատելիս, որպես հաշվարկային (շուկայական) արժեք հիմք ընդունի 917,730 Եվրոյի համարժեք դրամը, ինչն էլ գնահատող հանձնաժողովի կողմից իրականացվել է:

Վերը նշված գնման ընթացակարգի արդյունքում՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության և «Էլլիպս ԶիԷյ» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ.-ին կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊԶԲ-21/1» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր)՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգ ձեռքբերելու վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմել է՝ 586998792 (հինգ հարյուր ութսունվեց միլիոն ինը հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ։ Նշված Պայմանագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվել են հինգ ամիս անց, համաձայն՝ ՀՀ կառավարության 15.07.2021թ.-ի N1144-Ն որոշման և 21.07.2021թ.-ին Պայմանագրի 8.5 և 8.15 կետերի հիման վրա, կնքվել է N1 համաձայնագիրը, որով Պայմանագիրը մտել է ուժի մեջ և սկսվել է Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման գործընթացը։ Ըստ կնքված համաձայնագրի Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ, այսինքն Պայմանագրով նախատեսված 240 օրվա փոխարեն սահմանվել է 163 օր՝ 77 օրով պակաս, ինչպես նաև Պայմանագրի գնի 25%-ի չափով՝ 146749698 (մեկ հարյուր քառասունվեց միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար վեց հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, նախատեսվել է կանխավճար։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիր կնքելուց հետո Եվրոյի փոխարժեքը զգալի նվազել էր, այդ իսկ պարճառով՝ 16.12.2021թ.-ին (մինչև Հաշվեքննիչ պալատի Արձանագրության ստանալը, ՔԿԾ-ն Արձանագրությունն այն ստացել է 29.12.2021թ.-ին), ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայությունը գրությամբ դիմել է «Էլլիպս ԶիԷյ» ՍՊԸ-ին և առաջարկել է կատարել Պայմանագրի գնի նվազեցում։ «Էլլիպս ԶիԷյ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ քրեակարարողական ծառայության առաջարկությունը չի մերժել և համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով՝ 21.12.2021թ.-ին, կատարել է **Պայմանագրի գնի նվազեցում՝ 52.998.792 (հիսուներկու միլիոն ինը հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամի չափով և սահմանվել է Պայմանագրի նոր գին՝ 534000000 (հինգ հարյուր երեսունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն։**

Նույն համաձայնագրի համաձայն՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.8 կետը, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացույցային օրով և սահմանվել է նոր ժամկետ՝ մինչև 2022թ.-ի հունվարի 24-ը ներառյալ։ Նշված դեպքում՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները (բացի կանխավճարի գումարից)՝ 387.250.302 (երեք հարյուր ութսունյոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար երեք հարյուր երկու) ՀՀ դրամը, հետ է վարադարձվել ՀՀ պետական բյուջե, քանի որ 2021 թվականի դեկտեմբերի 30-ին ավարտվել է տվյալ բյուջեարային տարին։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլլիպս ԶիԷյ» ՍՊԸ-ին 24.01.2022թ.-ին ամբողջությամբ ավարտել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկում տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի տեղադրման աշխատանքները և վերջինս հանձնման-

ընդունման արձանագրությամբ ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության կողմից, ուստի անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության 23.12.2021թ. N 2121-Ն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կարարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման 1120.«Քրեակարարողական ծառայություններ» ծրագրի, 31002.«ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառման մեջ կատարել համապատասխան փոփոխություն և/կամ լրացում և ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկում տեղադրված տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի դիմաց վճարումներ կատարելու նպատակով, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կամ այլ ֆինանսական աղբյուրներից, հատկացնել 387.250.302 (երեք հարյուր ութսունյոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար երեք հարյուր երկու) ՀՀ դրամ գումար, որը իրենից ներկայացնում համաձայնագրով սահմանված նոր պայմանագրային գնի և վճարված կանխավճարի տարբերությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի դիմաց վճարումներ կատարելու հանգամանքը, ՀՀ քրեակարարողական ծառայության պետը 10.02.2022թ.-ին թիվ 40/7.1-694 գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարին՝ ՀՀ կառավարության քննարկմանը ՀՀ կառավարության որոշման համապատասխան նախագիծ ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը կարելի է արձանագրել, որ Հաշվեքննության արդյունքներով կազմված Արձանագրությամբ փաստագրված անհամապատասխանությունն վերացվել է, այն է՝ գնման հայտով ներկայացված միավորի գնի և նախագծողի կողմից հաշվարկված Տեսահսկման համակարգի միավորի գնին համարժեք փոխարժեքի միջև: Քանի որ անհամապատասխանությունը վերացվել է, ուստի 52.879.94 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրման փաստը նույնպես բացակայում է:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Արձանագրությունում անհամապատասխանությունների և խեղաթյուրման մասին մանրամասն և հանգամանալից նկարագրվել է, իսկ մինչև արձանագրության կազմելը հաշվեքննության օբյեկտում տվյալ հարցի վերաբերյալ կազմակերպվել է բազմաթիվ քննարկումներ, այդ թվում նաև հաշվեքննվող օբյեկտի ղեկավարության հետ: Հետևաբար արձանագրված անհամապատասխանությունները վերացվել են հաշվեքննության ընթացքում:

11. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորների և քրեակատարողական հիմնարկների հաստիքների հարաբերակցությունը, որի արդյունքում պարզվել է, որ մեկ կալանավորի համար՝ ըստ չորրորդ եռամսյակի տեղեկատվության միջինում կազմում է՝

Աղյուսակ 9

	ՔԿԾ անվանումը	Դատապարտյալների և կալանավորված անձանց միջին թիվը չորրորդ եռամսյակում	ՔԿԾ աշխատակիցների միջին թիվը չորրորդ եռամսյակում	Մեկ կալանավորին ընկնող քրեակատարողական ծառայողի հաստիքային միավոր
	Ը ն դ ամ ե ն ը	2124	2187	1.02
1	«Սևան»	84	182	2.1
2	«Կոշ»	41	167	4.07
3	«Արթիկ»	154	204	1.32
4	«Աբովյան»	70	141	2.02
5	«Դատապարտյալների հիվանդանոց»	129	162	1.25
6	«Նուբարաշեն»	331	229	0.68
7	«Վանաձոր»	150	174	1.15
8	«Գորիս»	75	102	1.35
9	«Վարդաշեն»	110	150	1.36
10	«Հրազդան»	130	120	0.92
11	«Արմավիր»	826	296	0.35
12	«Երևան կենտրոն» ⁵	24	47	1.95

⁵ Երևան կենտրոն ՔԿԸ-ի կոմունալ և էներգետիկ ծախսերը ներառված չեն ՔԿԾ-ի համապատասխան հոդվածներով ծախսերի մեջ:

Ինչպես երևում է աղյուսակից, մեկ կալանավորին պահելու համար նախատեսված քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների հաստիքային դրույքները տարբեր են և կազմում են 0,35 - 4,07 հաստիքային միավոր:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց ու դատապարտյալների և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների հարաբերակցության տարբերությունը՝ ըստ քրեակատարողական հիմնարկների, պայմանավորված է քրեակատարողական հիմնարկների տարբեր տեսակներ (փակ, կիսափակ, կիսաբաց, բաց, բուժական, կալանավորվածներին պահելու վայր) և լրակազմեր ունենալով, ինչպես նաև դրանք նախատեսված են տարբեր կատեգորիայի անձանց պահելու համար, մասնավորապես՝ առանձին քրեակատարողական հիմնարկ նախատեսված է կանանց և անչափահաս անձանց, առաջին անգամ ազատազրկման դատապարտված անձանց, դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող անձանց, հիվանդություններով տառապող անձանց համար և այլն:

Վերը նշված հարաբերակցության տարբերությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անկախ տվյալ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց քանակից՝ արտաքին պահպանություն և անվտանգության ապահովում իրականացնող ստորաբաժանումների պահակետերում ներգրավված քրեակատարողական ծառայողների թվաքանակը չի կարող փոփոխվել: Բացի այդ, նույն պատճառով չի կարող փոփոխվել նաև հիմնարկի վարչակազմի և այլ ստորաբաժանումների աշխատակիցների թվաքանակը (օրինակ՝ հիմնարկի ղեկավարության, կադրային, ֆինանսական, տնտեսական ապահովման, ընդհանուր աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումներ):

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից ընդունվել է ի գիտություն:

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

№	Անհամապատասխանություն/ խեղաթյուրում	Վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է ⁶	Հիմնավորումներ ⁷	Ծանոթություն
1	1.1 Սննդի պատրաստումը «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում կատարվել է ՔԿՀ-ների կողմից տրամադրված տարածքներում՝ վերջիններիս կոմունալ ծախսերի /էլ.էներգիա, գազ, ջուր, ջեռուցում/ հաշվին: ՔԿԾ-ի և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում նաև սննդի պատրաստման համար նախատեսված կոմունալ ծախսերը: Հետևաբար, նշված ծախսերը պետք է իրականացվեն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով և 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական		Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տես ընթացիկ եզրակացության 1-ին և 9-րդ կետերում	Կրկնվող կետ

⁶ Ընտրել երեք տարբերակներից մեկը /լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

⁷ Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով /լրացվում և ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

	գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով: 1.2 Թվով յոթ ՔԿՀ-ներում աշխատող 15 դատապարտյալների համար սահմանված հասարիքները ֆինանսավորվել է ՔԿԾ-ի կողմից, այնինչ նշված վարձավարության ծախսը՝ ըստ Պայմանագրի պետք է իրականացվեր «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող սննդի մատուցման շրջանակներում: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների հետ, ինչպես նաև ՔԿՀ կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի 4.1 կետով սահմանված պահանջների մասով: Նշված անհամապատասխանության հետևանքով առկա է խեղաթյուրում 5,565.54 հազ. դրամի չափով:			
2	2.1 2021 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման գծով ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 313,001.94 խ/մ, գումարով՝ 54,868.2 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 72,014.84 խ/մ, գումարով՝ 12,759.44 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի ա) ենթակետով սահմանված ջրի ծախսի նորմայի և փաստացի ծախսված ջրի		Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տես ընթացիկ եզրակացության 3-րդ կետում	Կրկնվող կետ

	քանակի միջև:			
	2.2 2021 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 661,503.33 կվ/ժ, գումարով՝ 26,460.07 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 11,147.00 կվ/ժ, գումարով՝ 445.88 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի բ) և գ) ենթակետով սահմանված էլեկտրաէներգիայի ծախսի նորմաների և փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակի միջև:		Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տես ընթացիկ եզրակացության 4-րդ կետում	Կրկնվող կետ
	2.3 2021 թվականի ընթացքում բնական գազի մատակարարման ծախսերը սահմանված նորմաներից ավելին է կազմել 500,827.00 խ/մ, գումարով՝ 68,278.11 հազ. դրամ, այդ թվում չորրորդ եռամսյակում՝ 150,462.00 խ/մ, գումարով՝ 20,914.21 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիվ 896-Ա որոշման 5-րդ կետի դ) ենթակետով սահմանված բնական գազի ծախսի նորմաների և փաստացի ծախսված քանակի միջև:		Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տես ընթացիկ եզրակացության 5-րդ կետում	Կրկնվող կետ
3	3.1 ՔԿԾ-ի ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքների կատարման համար հիմնականում թերությունների ակտեր չեն կազմվել:			Կրկնվող կետ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 1-ին բաժնի 2-րդ կետի, ինչպես նաև կնքված 2021 թվականի հունվարի 25-ին ՔԿԾ-ի և «Սուբաշին» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-21/1 պայմանագրի պահանջների հետ: 1.2 «Կոշ» ՔԿՀ-ում, թվով 2 կատարողական ակտերով իրականացված 630 ԿՎԱ տրանսֆորմատորի, էլեկտրական սարքավորումների և մոնտաժման աշխատանքների արժեքը գումարով՝ 4,384.08 հազ.դրամ, և «Արմավիր» ՔԿՀ-ում թիվ 40 կատարողական ակտով վարչական մասնաշենքի տանիքի կապիտալ վերանորոգումը, գումարով՝ 16,516.64 հազ.դրամ, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածի փոխարեն պետք է իրականացվեր տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ Կառավարության 2015թ. մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով		Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տես ընթացիկ եզրակացության 6-րդ և 9-րդ կետերում	
--	--	--	--

թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 4-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետի «Ժ» պարբերության մասով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հարվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5 հրամանի հավելված 16-ի հետ: 3.3 «Արմավիր» ՔԿՀ-ում թիվ 40 կատարողական ակտով, գումարով 16,516.64 հազ.դրամ վարչական մասնաշենքերի տանիքների ապամոնտաժման աշխատանքների համար չեն կազմվել պիտանելիության, որակի գնահատման և ընդունման-հանձնման ակտեր: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հարվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի պահանջների հետ: Առկա է անհամապատասխանություն «ՀՀ			
--	--	--	--

	Կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման պահանջների հետ: Նշված անհամապատասխանությունները հանգեցրել են խեղաթյուրման՝ 20,900.72 հազ.դրամ գումարի չափով:			
4	ՔԿԾ-ում պատասխանատու անձի կողմից վառելիքը բաշխվել է վարորդներին և պատասխանատու անձանց՝ կտրոններով՝ յուրաքանչյուր ամսվա համար: Վազքի ցուցանիշները, ուղեթերթիկներում լրացվել է՝ վարորդներին տրված վառելիքի չափից ելնելով, կատարելով հետհաշվարկ՝ կիրառելով ավտոմեքենաների վառելիքի ծախսի նորմաները: Չի պահպանվել գրանցամատյանների, երթուղային ուղեգրերի օրինակելի ձևերը: Մեքենաների երթուղային ուղեգրերի վրա բացակայում են բժշկի և մեխանիկի ստորագրության դաշտը, թվով 4 ՔԿՀ-ի երթուղային ուղեգրերը հերթական համարակալում չունեն: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ-ի 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի ձև		Հաշվեքննության օբյեկտի արձագանքը տես ընթացիկ եզրակացության 7-րդ կետում	Կրկնվող կետ

	Ծիւ- 6 և Ծիւ-7:			
--	-----------------	--	--	--